# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  N 02

## ԲԻ-ԳՀԱՊՁԲ-18/03 ծածկագրով գնանշման հարցմամբ գնում կատարելու ընթացակարգի Գնահատող հանձնաժողովի նիստի
## **հայտերի բացման մասին**

ք. Երևան « 23 » օգոստոսի 2018 թ.

Ժամը՝ 12:00

Մասնակցեցին՝ նախագահ՝ ագրոտեխնիկ, Յուրիկ Փայտյան
անդամներ՝ փականագործ, Նորիկ Արասխանյան
էներգետիկ, Ազիզ Արսխանյան
քարտուղար՝ գնումները համակարգող, Ելենա Խանամիրյան

Քննարկեցին՝

1. Գնի առաջարկ պարունակող ծրարները բացվել են ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտի շենքում, ք. Երևան, Աճառյան 1 հասցեում, նիստերի դահլիճում:

2. Ընդունել ի գիտություն, որ՝
2.1. Հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը, էլ. հասցե | Հեռախոս |
|---|---|---|---|
| 1. | “ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ” ՍՊԸ | ք. Երևան, Պուշկինի 1<br>tender@cps.am | 010-54-09-11 |
| 2. | “ՖԼԵՇ” ՍՊԸ | ք. Երևան, Եզնիկ Կողբացի 30<br>flash@flashltd.am<br>flashltdtender@gmail.com | 010-53-42-33 |

2.2. Հայտեր ներկայացրած մասնակիցներ ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

2.3. **Տվյալներ բացված ծրարներում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին՝**

ԲԻ-ԳՀԱՊՁԲ-18/03 ծածկագրով մրցույթին հրավերով սահմանված “ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ” և “ՖԼԵՇ” ՍՊԸ-ների կողմից փակ կնքված ծրարներով ներկայացվել են՝ գնի առաջարկ, արժեք, որը իր մեջ ներառում է ինքնարժեքը և շահույթը և հայտարարություն մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր հատկանիշների համապատասխանության և գրանցման պահից դրանց առկայության մասին: Ներկայացված բոլոր փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից՝ կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

2.4. Հայտ ներկայացրած մասնակիցների հայտում ներառված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 :**

3. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են՝

| Չափա-բաժին | Ապրանքի անվանումը | Գնի առաջարկները (ՀՀ դրամ) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | "ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ" ՍՊԸ | | «ՖԼԵՇ»ՍՊԸ | |
| | | Գինը առանց ԱԱՀ | Գինը | Գինը առանց ԱԱՀ | Գինը |
| 1. | Բենզին պրեմիում | 572 000 | 686 400 | 613 333, 33 | 736 000 |
| 2. | Դիզ. վառելիք | 177 083,33 | 212 500 | 191 666,67 | 230 000 |

3․1 "ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ" և "ՖԼԵՇ" ՍՊԸ-ների կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքի հաշվարկում թվաբանական անճշտություններ չկան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 :

<u>Որոշեցին՝</u>

1. 1-ին և 2-րդ չափաբաժինների գծով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել "ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ" ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 :

2․ Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել՝

2.1. Հրավերով սահմանված ժամկետում ուղարկել հարցում ՀՀ Ֆինանսների նախարարություն՝ "ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ" ՍՊԸ-ի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ֆինանսական միջոցների վերաբերյալ:

2.2. Ծանուցել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին՝ "ՍԻՓԻԷՍ ՕԻԼ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ" ՍՊԸ-ին, առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 :

3. ԲԻ-ՇՀԱՊՁԲ-15/1-17/1 ծածկագրով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից համապատասխան եզրակացություն ստանալու օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ Յուրիկ Փայտյան

Հանձնաժողովի անդամներ՝ Նորիկ Արասխանյան

Ազիզ Արսխանյան

Հանձնաժողովի քարտուղար, գնումները համակարգող՝ Ելենա Խանամիրյան